Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
օգոստոսի 24 -ի N 1032 -Ն որոշման

«Հավելված N 8
ՀՀ կառավարության 2004 թվականի
օգոստոսի 19-ի N 1354-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ

NN ը/կ	Տրամադրվող ցուցանիշի կամ տեղեկատվության անվանումը	Տեղեկատվության տրամադրման պարբերականությունը	Տեղեկատվությունը ներկայացնելու ձևը	Տեղեկատվությունը ներկայացնելու ժամկետը
1	2	3	4	5
1.	ՀՀ արտաքին առևտրի մաքսային վիճակագրության տվյալների բազաները (ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետությունների, ԵԱՏՄ անդամ հանդիսացող պետությունների, ֆիզիկական անձանց) ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ տասանիշ կոդերի, ըստ հետևյալ դաշտերի՝ արտահանում/ներմուծում, «ընթացակարգերը», «ենթաընթացակարգերը», ծագման երկրի ծածկագիրը, առևտուր անող/նշանակման երկրի ծածկագիրը, լրացուցիչ չափի միավորի ծածկագիրը, քանակը՝ արտահայտված չափման լրացուցիչ միավորներով, նետտո քաշը/ հիմնական չափի միավորով (կգ), մաքսային արժեքը (ՀՀ դրամ, ԱՄՆ-ի դոլար), սահմանին տրանսպորտի տեսակի ծածկագիրը, տրանսպորտի	Յուրաքանչյուր ամիս կուտակային կարգով	էլեկտրոնային	ամսվա ավարտից 20 օրվա ընթացքում

1	2	3	4	5
	պատկանելության երկրի ծածկագիրը, գանձումներն ըստ հարկատեսակների)			
2.	Գրանցված ՀՀ քաղաքացի հանդիսացող վարձու աշխատողների թվաքանակ, ՀՀ քաղաքացի հանդիսացող վարձու աշխատողների համար հաշվարկված աշխատավարձ, գործատուի կողմից ՀՀ քաղաքացի հանդիսացող մասնակիցների համար փոխանցված սոցիալական վճար, պետության կողմից ՀՀ քաղաքացի հանդիսացող մասնակիցների համար փոխանցված լրացուցիչ կուտակային հատկացում, գրանցված օտարերկրյա քաղաքացի հանդիսացող և քաղաքացիություն չունեցող վարձու աշխատողների թվաքանակ, օտարերկրյա քաղաքացի հանդիսացող և քաղաքացիություն չունեցող վարձու աշխատողների համար հաշվարկված աշխատավարձ, գործատուի կողմից օտարերկրյա քաղաքացի հանդիսացող և քաղաքացիություն չունեցող մասնակիցների համար փոխանցված սոցիալական վճար, պետության կողմից օտարերկրյա քաղաքացի հանդիսացող և քաղաքացիություն չունեցող մասնակիցների համար փոխանցված լրացուցիչ կուտակային հատկացում, օտարերկրյա քաղաքացի հանդիսացող և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից վճարված եկամտային հարկ	Յուրաքանչյուր ամիս	էլեկտրոնային	ամսվա ավարտից 30 օրվա ընթացքում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ